



## **Australian Government**

### **Department of Health**

#### **Հանրության պաշտպանությունը կորոնավիրուսից (COVID-19)**

Քանի որ մենք շարժվում ենք դեպի COVIDSafe ապրելուն, կարևոր է, որ դուք մնաք տանը, եթե անառողջ եք: Եթե դուք ունեք մրսաձուխան կամ գրիպի նման ախտանիշներ, դուք պետք է դիմեք բժշկական խորհրդատվության COVID-19-ի թեստավորում անցնելու վերաբերյալ: Մեղմ ախտանիշներ ունեցող մարդիկ դեռ կարող են տարածել վիրուսը:

#### **Թեստավորում COVID-19-ի համար**

Թեստավորումը պարզում է, արդյոք հիվանդները ունեն COVID-19 և օգնում է առողջապահական մարմիններին հետևելու վիրուսի տարածմանը:

Վաղ ախտորոշումը նշանակում է, որ դուք կարող եք քայլեր ձեռնարկել կանխելու վիրուսի տարածումը ձեր ընկերներին կամ ընտանիքին: Եթե դուք ունեք ջերմ, հազ, կոկորդի ցավ կամ դժվարացած շնչառություն, կարևոր է, որ դուք թեստավորում անցնեք:

Թեստավորումը առավել կարևոր է, եթե դուք անառողջ եք և.

- դուք վերջերս եք վերադարձել Ավստրալիա արտերկրից: Բոլոր ձանապարհորդները կմեկուսանան 14 օր Ավստրալիա ժամանելուց հետո;
- դուք սերտ շփման մեջ եք եղել COVID-19-ով ախտորոշված որևէ մեկի հետ վերջին 14 օրվա ընթացքում;
- դուք առողջապահական, տարեցների խնամքի կամ բնակավայրում տրամադրվող խնամքի աշխատող եք կամ անձնակազմի անդամ, ով ուղղակի շփման մեջ է հիվանդի հետ:

#### **Որտե՞ղ կարող եմ թեստավորում անցնել**

Դուք կարող եք կապվել ձեր բժշկի հետ թեստավորում անցնելու համար կամ կարող եք հաճախել շնչառական բուժարան: Երբ այցելեք ձեր բժշկին, կարևոր է, որ սկզբում կապվեք բուժարանի հետ և տեղեկացնեք ձեր ախտանիշների մասին: Սա նրանց կօգնի նախապատրաստվել ձեր այցին և պաշտպանել բուժարանում գտվող մյուս մարդկանց:

Շնչառական բուժարանները առողջապահական կենտրոններ են երկրում, որոնք կենտրոնանում են սուր շնչառական վարակի ախտանիշներ ունեցող մարդկանց թեստավորման վրա: Ձեր շրջակայքում շնչառական բուժարան գտնելու համար, այցելեք՝ [www.health.gov.au/covid19-clinics](http://www.health.gov.au/covid19-clinics): Ձեր նահանգը կամ տարածքը հնարավոր է ունենա լրացուցիչ բուժարաններ, որտեղ դուք կարող եք թեստավորում անցնել: Դուք կարող եք դրանք գտնել ձեր նահանգի կամ տարածքի առողջապահական կայքերի միջոցով:

Եթե դուք թեստավորում անցնեք վիրուսի համար, դուք պետք է մնաք տանը և խուսափեք շփվել այլ մարդկանց հետ: Ձեր թեստի արդյունքները կարող են պատրաստ լինել մեկ կամ երկու օրից:

Եթե դուք ունեք լուրջ ախտանիշներ, ինչպես օրինակ՝ շնչառության դժվարություն, դուք պետք է զանգահարեք 000 շտապ բժշկական օգնության համար:

### **Օգնեք կանգնեցնել տարածումը**

Մեր համայնքները պաշտպանելու համար՝ յուրաքանչյուրը պետք է շարունակի պահպանել ֆիզիկական հեռավորություն և պատշաճ հիգիենա: Դուք պետք է 1.5 մետր հեռավորություն պահպանեք այլ մարդկանցից և մնաք տանը, եթե դուք անառողջ եք: Լվացեք ձեր ձեռքերը օձառով և ջրով, հազացեք կամ փռչացեք ձեր թևի մեջ: Մենք բոլորս կարող ենք անել մեր բաժինը՝ օգնելու դադարեցնել COVID-19-ի տարածումը:

### **Ներբեռնեք COVIDSafe ծրագիրը**

Եթե դեռ չեք արել, ներբեռնեք COVIDSafe ծրագիրը՝ օգնելու պաշտպանել ձեր ընտանիքը, ընկերներին և համայնքը: Ծրագիրը աջակցում է հանրային առողջապահության ոլորտի պատասխանատուներին՝ տեղեկացնել այն անձանց, ովքեր կորոնավիրուսով վարակված որևէ մեկի հետ շփման մեջ են եղել:

### **Լրացուցիչ տեղեկություններ COVID-19-ի վերաբերյալ**

Կարևոր է տեղեկացված մնալ պաշտոնական աղբյուրների միջոցով: Այցելեք [www.australia.gov.au](http://www.australia.gov.au), զանգահարեք կորոնավիրուսի վերաբերյալ թեժ գիծ (Coronavirus Helpline) 1800 020 080 հեռախոսահամարով կամ թարգմանչական ծառայություն՝ 131 450 հեռախոսահամարով: